

## ՉԵՆԿԻԼԵՐՑԻՆ

Հարցուցի ներսը նստած բարեկամիս.

-Ի՞նչ է կարծիքդ ՉԵՆԿԻԼԵՐՑԻՆ մասին:

-ՉԵՆԿԻԼԵՐՑԻՆ: Նշանաւոր է ականաւորներու մէջ: Եթէ ուրիշներ քարէն հաց կը հանեն, ան ատիկա ընելէն զատ, գիտէ հացէն ալ քար հանել ու անով պայթեցնել գլուխ մը: Եթէ Լիկուրգոսի օրէնսդրութենէն որոշ մասեր ի պատուի ըլլային՝ ՉԵՆԿԻԼԵՐՑԻՆ իր տան պատերը կրնար սրահակել պատուանշաններով: Աւանդութիւնը կ'ըսէ, թէ ՉԵՆԿԻԼԵՐԻ հիմնադիրն է Գող Վասիլ: Ապահովագրական ընկերութիւնները ՉԵՆԿԻԼԵՐԻ գտնուող թաղի մը մէջ մարդ չեն ապահովագրեր, որ եւ է բանի դէմ: Երբ առարկայ մը կորսնցնեմ, անմիջապէս հիւր կ'երթամ ՉԵՆԿԻԼԵՐԻ տուները: Եթէ ՉԵՆԿԻԼԵՐԻ բան մը տաս, բնաւ չի կորսուիր, միշտ իր քով կը մնայ: ՉԵՆԿԻԼԵՐԻ շատ կը սիրէ բարձունքը եւ մաքուր օդը. այդ պատճառով միշտ կը փափաքի շրջիլ լեռան վրայ: Եւլախ ՏԵՐԷՆ Օրթագիւղ, անկէ Իզմիտ, Պոլիս ու Փարիզ իր կեանքը համակ շարժում է եղած: Սիրելի է իրեն երթալ-գալը, առնել-տանիլը:

Ուտող խմող է, սակայն, կը խոստովանի, որ ուրիշին ուտելիքը եւ խմելիքը աւելի համով է: Այդ պատճառով յաճախ կ'ուտէ, կը խմէ ուրիշէն, առնականօրէն:

Պատասխանեցի բարեկամիս.

-Խօսքերուդ մէջ քիչ է ելեքտրականութիւնը: Կոճակ ընելու տեղ՝ կոխէ ելեքտրական կոճակին վրայ:

-Ահա...ես կ'ամբաստանեմ զինքը:

-Ես ալ քեզ կ'ամբաստանեմ: ՉԵՆԿԻԼԵՐԻ համով-հոտով մարդ մըն է: Իրապաշտ է ու ներկայապաշտ: Այս աշխարհիս, այս դարուս մարդն է: Գիտէ ժամանակին հետ քալել, շատ անգամ՝ ժամանակին վրայ հեծած: Անիկա իր նախընտրած ասպարեզին մէջ միշտ ասպետ է: Եթէ զինքը հայ Սպարդացիի տեղ դնելով՝ կ'ուզես ըսել, թէ գող է, մի՛ մոռնար, որ ան գողցած է միայն գողերէն: Ուրեմն գողերուն արդար պատուհասն է: Եւ որովհետեւ ամէն մարդ, առաւել կամ նուազ, գող է, ՉԵՆԿԻԼԵՐԻ ատիկա քաջ գիտնալով, ամէնէն ալ կը